ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 4-Ա

«23» հունվարի 2020 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 91-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի փողոց 26, օբյեկտ 19 հասցեում գտնվող համայնքապետարանի վարչական շենքից 363,22 քառակուսի մետր տարածքը «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպությանը «Ընտանիքի և երեխայի աջակցության» ցերեկային կենտրոն հիմնելու նպատակով, անհատույց, 5 տարի ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 91-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները
   1) որոշման վերնագրում «5 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ» թիվը և բառերը փոխարինել «10/ՏԱՍԸ/ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ»թվով և բառերով.
   2) Որոշման բովանդակության մեջ « 5 տարի ժամկետով» թիվը և բառերը փոխարինել «10/տասը/ տարի ժամկետով» թվով և բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 6	*Դեմ՝ 0*	*Ձեռնպահ՝ 0*
ԱՐՄԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	----------	----------	----------
ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝	----------	----------	----------
ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐՏԵՄ ԴԱՎԹՅԱՆ՝	----------	----------	----------
ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«23» հունվարի 2020 թվական
գյուղ Ամասիա